

**ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ N 22/4

ք.Երևան

20 ապրիլի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ Ա/Ձ Արայիկ Գևորգյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Ա/Ձ Արայիկ Գևորգյանն իր գործունեությունը սկսել է 23.10.2017թ. և ի սկզբանե աշխատել է շրջանառության հարկի դաշտում, հանձնել է օրենքով սահմանված բոլոր հաշվետվությունները, կատարել է համապատասխան վճարումները, համապատասխանում է շրջանառության հարկի դաշտում աշխատելու պայմաններին:

Ա/Ձ Արայիկ Գևորգյանի հաշվապահը հարգելի պատճառներով (նրա հետ տեղի է ունեցել դժբախտ դեպք) սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը: Այդ իսկ պատճառով 05.03.2018թ. ծանուցվել է, որ հայտնվել է ԱԱՀ-ի հարկման դաշտում:

Ա/Ձ Արայիկ Գևորգյանը խնդրում է ընդառաջել, տալ ևս մեկ հնարավորություն շրջանառության հարկ վճարող համարվելու համար, որպեսզի չլուծարի իր գործունեությունը:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Ա/Ձ Արայիկ Գևորգյանը ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 23.10.2017թ.:

Հարկային մարմնի կողմից 26.10.2017թ. Ա/Ձ Արայիկ Գևորգյանին սահմանված կարգով ծանուցվել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու մասին: Ա/Ձ Արայիկ Գևորգյանը 30.10.2017թ. ներկայացրել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը և 2017թ. ընթացքում համարվել է շրջանառության հարկ վճարող:

Ա/Ձ Արայիկ Գևորգյանի իրացման շրջանառությունը 2017թ. ընթացքում կազմել է 49.150 դրամ:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով հստակ սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված

պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նորարները (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատված ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Արայիկ Գևորգյանի կողմից մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին չի ներկայացվել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, հետևապես 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող չի կարող համարվել:

Ինչ վերաբերվում է դիմում-բողոքում բերված այն պնդումներին, որ Ա/Ձ Արայիկ Գևորգյանի հաշվապահի հետ տեղի ունեցած դժբախտ դեպքի հետևանքով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացվել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, ապա քննարկման ընթացքում պարզվեց, որ հաշվապահը չի հանդիսացել Ա/Ձ Արայիկ Գևորգյանի մոտ գրանցված վարձու աշխատող, նա չի կրել պարտավորություն Ա/Ձ Արայիկ Գևորգյանի անունից հաշվարկ-հաշվետվություններ ներկայացնելու համար, հետևապես նրա հետ տեղի ունեցած դժբախտ դեպքը, ըստ էության, չի կարող հիմք հանդիսանալ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը սահմանված ժամկետում չներկայացվելու հանգամանքը հարգելի համարելու համար:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ա/Ձ Արայիկ Գևորգյանի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ